# Հանրապետության արտաքին հարաբերությունները

### Հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների և Ուկրաինայի հետ

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հարևան և մյուս պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումն էր, ինչի լուծումն այնքան էլ դյուրին չէր: Հայաստանի փոխհարաբերություններն բարդ ու հակասական էին անմիջական հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ: Վերջինս (անվերապահորեն) և Վրաստանը (աննշան վերապահումներով) ձգտում էին կապվել Թուրքիայի հետ՝ Ռուսաստանի դեմ ընդհանուր ճակատ կազմելու համար, մինչդեռ Հայաստանը Թուրքիայի գերիշխանությունը նկատում էր «ոչ միայն փտանգաւոր, այլեւ պարզապէս մահացու իր գոյութեան համար»[300]: Գերմանիան պաշտպանում էր Վրաստանի, իսկ Թուրքիան՝ Ադրբեջանի շահերը, երկուսն էլ՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության:

Սկզբնական շրջանում հայտնվելով մեկուսացման ու շրջափակման մեջ՝ Հայաստանի Հանրապետությունն իր հայացքն ուղղեց դեպի Ռուսաստան, որտեղ քաղաքական իրադրությունը երերուն էր, խառը և տակավին անկանխատեսելի: 1918 թ. ամռանը չկար միասնական հզոր Ռուսաստան: Այն ցնցվում էր ներքին քաղաքական հակամարտություններից. մի կողմում խորհրդային Ռուսաստանն էր, մյուս կողմում՝ գեներալ Ա. Դենիկինի ու ծովակալ Ա. Կոլչակի ղեկավարությամբ ոտքի ելած հակախորհրդային ուժերը, որ ստեղծել էին ոչ խորհրդային պետական կազմավորումներ: Հակամարտող ուժերից որևէ մեկի վերջնական հաղթանակը դեռևս անկանխատեսելի էր: Այդ պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կանգնած էր երկընտրանքի առաջ. դեպի ո՞ւր գնալ, ո՞ր Ռուսաստանի հետ կապեր հաստատել: Հայաստանի անկախացման առաջին ամիսներին երկրի համար ստեղծված ներքին ու արտաքին ծայրաստիճան աննպաստ պայմաններում հայ քաղաքական և հասարակական լայն շրջաններում գերակայում էր Ռուսաստանի հետ բարեկամական, բնականոն դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մտայնությունը՝ անկախ նրա պետական–քաղաքական կառուցվածքից:

Արտաքին աշխարհից լրիվ կտրված Հայաստանի Հանրապետությունը, հարկադաբար խախտելով Բաթումի 1918 թ. հունիսի 3–ի պարտավորագիրը և հունիսի 4–ի պայմանագրի կետերը, խիստ գաղտնի և զգուշորեն փորձում էր ուղիներ որոնել հարաբերություններ հաստատելու Ռուսաստանի թե՛ խորհրդային և թե՛ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ՝ անտեսելով այդ երկրում ընթացող քաղաքացիական արյունալի պատերազմը: Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու մի շարք լուրջ դրդապատճառները և անհապաղ լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներն այնքան ծանրակշիռ ու բազմազան էին, որ չէին կարող անուշադրության կամ անտարբերության մատնվել Հայաստանի խորհրդի և կառավարության կողմից: Ապավինելով Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքին՝ Հայաստանի կառավարությունը փորձում էր ճանաչել տալ սեփական պետության անկախությունը և ապահովել երկու երկրների բարեկամական հարաբերությունները: Հույսեր էին տածում, թե Ռուսաստանը որևէ կերպ կթեթևացնի Ադրբեջանի ու Վրաստանի մշտական ճնշումներն ու թշնամանքը, կչե-

[300] Տե՛ս Քաջազնունի Յ., Ռուսաստա՞ն, թէ՞ Թիւրքիա. բաց նամակ Z–ին, Պուքրէշ, 1924, էջ 11:

զոքացնի Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետությանը մշտապես սպառնացող վտանգը: Շրջափակման մեջ հայտնված Հայաստանն ակնկալում էր Ռուսաստանից ներկրել հացահատիկ, զենք, զինամթերք և կենսականորեն անհրաժեշտ այլ ապրանքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտահոգված էր Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական արևմտյան ճակատից, գերմանական ու ավստրո–հունգարական գերությունից տուն վերադարձող նախկին ցարական բանակի հազարավոր հայ սպաներին ու զինվորներին, որոնք կուտակվել էին Ռուսաստանի հարավում, հայրենիք տեղափոխելու ուղիներ որոնելու խնդրով: Կարևորվում էր նաև Ռուսաստանի հարավի՝ Դոնի, Կուբանի, Թերեքի և Հյուսիսային Կովկասի մյուս հայ համայնքներին օժանդակելու խնդիրը, ինչպես նաև օգտագործելու նրանց մտավոր ուժը և նյութական միջոցները հայրենիքի համար: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի հարավի միջև ապրանքափոխանակություն իրականացնելն անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներից էր: Հայաստանի կառավարությունը նախատեսում էր Եկատերինոդար (Կրասնոդար) ուղարկել հայկական կոնյակ, սպիրտ, բամբակ, կաշի և այլ ապրանքներ, իսկ Եկատերինոդարից ստանալ հաց, սննդամթերք, զենք և այլ անհրաժեշտ իրեր:

Ռուսաստանի հետ կապերի հաստատման կարևոր պատճառներից մեկը, անշուշտ, գաղթականության՝ հրատապ և հիմնավոր լուծում պահանջող խնդիրն էր:

Մեծ եղեռնից փրկված հայ ժողովրդի մի հատվածը, լքելով հայրենիքը, հաստատվել էր մերձակա ու հեռավոր երկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում: Միայն Ռուսաստանի հարավի՝ Դոնի, Կուբանի, Թերեքի երկրամասերի մի շարք բնակավայրերում պատերազմի ընթացքում հանգրվանել էին 100 հազարից ավելի հայ գաղթականներ ու մի քանի հազար նախկին ռազմագերիներ, որոնք գտնվում էին միանգամայն ծանր ու անօգնական վիճակում: Ռ. Դարբինյանը գրում է, թե Արևմտյան Հայաստանից Առաջին աշխարհամարտի տարիներին հարավային Ռուսաստան գաղթած հայերն այնքան շատ էին, որ ամենուր լսվում էր մայրենի լեզուն. «Երբեմն կը թւէր, թէ կը գտնուէիր ոչ թէ Ռուսաստանի, այլ Հայաստանի մէջ»[301]:

Երկրի անկախացման սկզբնական շրջանում Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային երկրամասեր ու քաղաքներ էին գաղտնի գործուղվում հայկական տարբեր պատվիրակություններ ու սուրհանդակներ՝ կապեր ու հարաբերություններ հաստատելու համար: Հայաստանի Հանրապետության քաղաքական ուժերի համար բոլշևիկյան գաղափարախոսությունն անընդունելի էր, սակայն Հայաստանի անկախացման առաջին ամիսներին իշխանությունները Խորհրդային Ռուսաստանի հետ բնականոն դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղիներ էին որոնում:

Հայաստանի անկախացման առաջին օրերից Մոսկվայում էին Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան), Սարգիս Հակոբյանը (Լիպարիտ Նազարյան) և բժիշկ Հակոբ Զավրյանը, որոնք փորձում էին կանոնավոր հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ, իրավաբանորեն ճանաչել տալ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անկախ պետություն, և օգտագործել նրա հնարավորությունները Հայաստանին օգնելու համար: Սակայն Ռուսաստանի խորհրդային իշխանությունների հետ անմիջական հարաբերություններ հաստատելու հնարավորությունները սահմանափակ էին, և օգոստոսի 27–ին նշանակված բանակցությունները չկայացան: Ավելին՝ նույն օրը ձերբակալվեցին հայկական պատվիրակության երեք անդամները:

Ռուսաստանի խորհրդային իշխանության ներկայացուցիչների և Հայաստանի Հանրապետության պատվիրակների միջև բանակցություններ էին ընթանում նաև Բեռլինում: 1918 թ. օգոստոսի 19–ին Հայոց ազգային խորհրդին և կառավարությանն ուղղված նամակում հայկական պատվիրակության ղեկավար Հ. Օհանջանյանը գրում է, որ «...անկախությանը (Հայաստանի Հանրապետության – խմբ.) հակառակ է Ռուսաստանը»[302]: Նույն խնդրով 1918 թ. հոկտեմբերի 1–ին Հ. Օհանջանյանը և Գ. Զամոյանը Բեռլինում հանդիպում են խորհրդային դիվանագետ Ադոլֆ Իոֆֆեի հետ, որը նույնպես ավարտվում է անարդյունք: «Մենք ձեզ՝ հայերիդ,– ասել էր Ա. Իոֆֆեն,– փրկում ենք կոտորածից և ոչնչանալուց և հիմա սպասում ենք, որ դուք խոսք չեք բարձրացնի անկախության մասին, ոչ էլ զանազան դրամներ կպահանջեք մեզնից՝ իբրև մի առանձին մարմին»[303]: Խորհրդային Ռուսաստանի ղեկավարները, Հայաստանը դիտելով որպես Համաձայնության երկրների (Անտանտ – խմբ.) դաշնակցի, չճանաչեցին նրա անկախությունը և հրաժարվեցին նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց:

Թեև Ռուսաստանի հարավի զինված ուժերի (կամավորական բանակ) գլխավոր հրամանատարությունը նույնպես չէր ընդունում ռուսական նախկին կայսրությունից անջատված անկախ պետությունների գոյությունը, չէր ճանաչում նաև Հայաստանի Հանրապետության անկախությունը, այնուհանդերձ, արտաքին աշխարհից ամբողջապես մեկուսացված Հայաստանի Հանրապետությունը փորձում էր որոնել Ռուսաստանի հարավի հետ հարաբերություններ հաստատելու ուղիներ:

1918 թ. հունիսի վերջին Ս. Վրացյանը հատուկ առաքելությամբ Թիֆլիսից մեկնում է Ռուսաստանի տարբեր շրջաններ և մինչև հոկտեմբերի վերջը լայն գործունեություն ծավալում Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության «Հատուկ խորհրդակցության» հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Նա բազմաթիվ հանդիպումներ է ունենում հրամանատարական կազմի հետ և առանձնապես ջերմ ընդունելության արժանանում գեներալ Ա. Ալեքսեևի կողմից:

Հարկ է նշել, որ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության «Հատուկ խորհրդակցության» և Հայաստանի Հանրապետության միջև ամենից առաջ հաստատվեցին ռազմաքաղաքական բնույթի կապեր: Այդ ուղղությամբ ձեռնարկվեցին գործնական քայլեր: ՀՀ զինվորական նախարար Հ. Հախվերդյանի 1918 թ. հոկտեմբերի 1–ի հրամանով՝ հայկական բանակի շտաբի պետի օգնական, փոխգնդապետ Վլասևն ազատվեց զբաղեցրած պաշտոնից և գործուղվեց Եկատերինոդար՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության կից «Հատուկ խորհրդակցության» հետ կապեր հաստատելու նպատակով: Փոխգնդապետ Վլասևի այցը Եկատերինոդար կրում էր կիսապաշտոնական և գաղտնի բնույթ: Նրան հանձնարարված էր կամավորական բանակի հրամանատարության միջոցով հայտնաբերել Ռուսաստանի հարավում կուտակված նախկին ցարական բանակի այն հայ սպաներին ու զինվորներին, որոնք վերադարձել էին գերմանական ու ավստրոհունգարական գերությունից, և փորձել նրանց տեղափոխել հայրենիք: Վլասովը պետք է նաև հացահատիկ, սննդամթերք, զինամթերք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ հայթայթեր և ուղարկեր Հայաստան:

«Հատուկ խորհրդակցությունը» դրականորեն ընդունեց փոխգնդապետ Վլասևի առաքելությունը Եկատերինոդար և խոստացավ օժանդակել:

Կամավորական բանակի բարձրագույն հրամանատարությունը և «Հատուկ խորհրդակցությունը» իրենց հերթին 1918 թ. նոյեմբերին Երևան գործուղեցին գնդապետ

[301] Դարբինյան Ռ., Կեանքիս գրքէն (փշրանքներ իմ յուշերէն). – Հայրենիք, 1960, թիվ 8 (օգոստոս), էջ 25–26:

[302] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 135, թ. 6:

[303] Նույն տեղում, գ. 11, թ. 73:

*Լեսլին։ Նոյեմբերի 6-ին գլխավոր շտաբի ռազմածովային նավատորմի բաժնի պետ գեներալ Ա. Լուկոմսկին վերջինիս վկայական է հանձնում, որով նա օժտվում է Հայկական բանակում Ռուսաստանի կամավորական բանակի զինվորական ներկայացուցչի լիազորություններով։ Նոյեմբերի 8-ին «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովը Լեսլին հանձնում է մեկ այլ վկայական, որով նրան իրավունք է վերապահում «քաղաքական բոլոր հարցերով հարաբերությունների մեջ մտնելու Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչների հետ»։ Գնդապետը միաժամանակ զինվորական ծառայության էր անցնելու հայկական բանակի գլխավոր շտաբում և գաղտնի գործող ռուսական հետախուզական խմբում։*

*Գնդապետ Լեսլին գործուղվեց Երևան այն ժամանակ, երբ ավարտվել էր Առաջին աշխարհամարտը, և տարածաշրջանում հիմնովին փոխվել էր ռազմաքաղաքական իրադրությունը։ Նոր պայմաններում «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» ծրագրով Երևան գործուղված գնդապետ Լեսլին սառը ընդունելություն գտավ հայկական պաշտոնական շրջաններում։ 1918 թ. նոյեմբերի վերջին Երևանում գնդապետ Լեսլին իր վկայականների հետ իշխանություններին հանձնեց նաև գեներալ Ա. Դրագոմիրովի նոյեմբերի 8-ի պաշտոնական նամակը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին։ Դա առաջին պաշտոնական փաստաթուղթն էր, որն առաջարկում էր դաշնակցել Ռուսաստանի կամավորական բանակի հետ՝ «...նպատակ ունենալով միավորելու ռուսական հողերը»։*

*Գեներալ Ա. Դրագոմիրովը Հայաստանի Հանրապետությունից պահանջում էր նաև պատվիրակություն ուղարկել՝ մասնակցելու Ռումինիայի Յասսի քաղաքում նոյեմբերի 16-ին հրավիրվող խորհրդակցությանը, որտեղ քննարկվելու էր բոլշևիզմի դեմ պայքարի հարցը։ Սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չհամարեց պատվիրակություն գործուղել ինչպես Եկատերինոդար, այնպես էլ Յասսի, քանի որ դա չէր բխում Հանրապետության արտաքին քաղաքական շահերից, ավելին՝ բուն Հայաստանի Հանրապետությունում բոլշևիզմը թույլ էր և սպառնալիք չէր ներկայացնում երկրի անվտանգության տեսակետից։ Ահա թե ինչու Հայաստանի կառավարությունը, մի շարք լուրջ դրդապատճառներից ելնելով, մի կողմից՝ ձգտել է հարաբերություններ հաստատելու Ռուսաստանի հարավի հետ, իսկ մյուս կողմից՝ նրանց նկատմամբ դրսևորելու խիստ զգուշավորություն։ Հայաստանի Հանրապետությունը խուսափում էր Ա. Դենիկինի կամավորական բանակի հետ որևէ քաղաքական դաշինք կնքելուց և փորձում էր հարաբերությունները սահմանափակել առևտրատնտեսական շրջանակներով։*

*Ռուսաստանի հարավի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները պահպանվեցին մինչև Անդրկովկասում բրիտանական զորամասերի հայտնվելը։ Նոր պայմաններում այդ հարաբերություններն այլ ընթացք ստացան։ Հայաստանի կառավարությունը հարկադրված էր սառեցնել հարաբերությունները «Հատուկ խորհրդակցության» հետ, ինչը պայմանավորված էր Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակից Ռուսաստանի հարավի միջև Անդրկովկասի հարցում գոյություն ունեցող անհամաձայնություններով և նրանց վարած իրարամերժ քաղաքականությամբ։*

*Քողարկվելով խաղաղարարի առաքելությամբ՝ Անգլիան նպատակ ուներ հաստատվելու Անդրկովկասում, և դրան հասնելու համար նա, բնականաբար, պետք է հաղթահարեր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը։*

*Հայաստանի անկապտելի մասը կազմող Կարսի մարզի շուրջ Առաջին աշխարհամարտից հետո ծավալված պայքարը բացահայտեց Անգլիայի երկդիմի քաղաքականությունը հայության նկատմամբ։ Համաձայն Մուդրոսի զինադադարի՝ թուրքական զորքը պետք է*



*հեռանար Կարսի նահանգից մինչև նախապատերազմյան ռուս-թուրքական սահմանը։ Զինադադարի պահանջների իրականացումը դրված էր անգլիական զինվորական առաքելության վրա։*

*Կարսի մարզի վրա վերահսկողություն էր սահմանելու Հայաստանի Հանրապետությունը։ Սակայն թուրքական 9-րդ բանակի գլխավոր հրամանատար Շևքեթ փաշան միտումնավոր ձգձգեց մարզի հանձնումը, որը հնարավորություն և պայմաններ ստեղծեց 1918 թ. նոյեմբերին Կարսում մահմեդական Ազգային խորհուրդ ձևավորելու համար։ Վերջինիս նպատակն ամբողջ մարզը թուրքերի ազդեցության ոլորտում պահելն էր։*

*1919 թ. հունվարի կեսին Անգլիայի աջակցությամբ հայտարարվեց Հարավարևմտյան կովկասյան Հանրապետության մասին՝ կազմելով ժամանակավոր կառավարություն՝ «Շուրա», ինչը ցույց էր տալիս անգլիական զորահրամանատարության հակահայկական գործելակերպը, նրա կողմից ստանձնած պարտավորությունների ոչ հետևողական իրագործումը։*

*Ջ. Ուոքերն ավելի շուտ հրահանգներ էր տվել Շևքեթ փաշային և Ս. Տիգրանյանին՝ առաջինին՝ Կարսի մարզից հեռանալու, իսկ վերջինին՝ մարզը Հայաստանին հանձնելու մասին։ Սակայն հետո փոխվեց նրա դիրքորոշումը։ Չհարգելով իր իսկ արձակած հրահանգները՝ նա ոչ միայն չսանձեց, չարգելեց Կարսի մարզում ոչ օրինական հանրապետության հռչակումը, այլև ամեն կերպ փորձեց աջակցել դրան։ Բրիտանական զորահրամանատարությունն իր գործելակերպով Անդրկովկասում, փաստորեն, նպաստում էր թուրքերի հակահայկական գործողություններին։*

*Բացի թուրքամետ ու հակահայկական կողմնորոշումից, բրիտանական զորահրամանատարության դիրքորոշման փոփոխության դրդապատճառ էր նաև Կարսի մարզի նկատմամբ Ռուսաստանի կամավորական բանակի հավակնությունը, որը հայտնի դարձավ 1919 թ. հունվարի 8-ի համաձայնագրի ստորագրումից հետո։ Եվ քանի որ անգլիական հրամանատարի աչքում թուրքն ամենավստահելի պատվարն էր Ռուսաստանի դեմ, նա իսկույն շտապեց ուղղել իր թույլ տված սխալը և Կարսը հանձնել թուրքերին։ Ինչպես Ա. Ահարոնյանին 1919 թ. մարտի 6-ին ուղղած նամակ-հրահանգում նշում է Ս. Տիգրանյանը, Անգլիան չի ուզում հենվել հայկական որևէ ուժի վրա, որովհետև հայն ավելի է ռուս, քան ռուսն ինքը, և չի կարելի հենվել հայի վրա, երբ Ռուսաստանի դեմ որևէ բան է ծրագրվում։*

*Հայտնի է, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը ձգտում էր Անդրկովկասը, այդ թվում նաև Կարսի մարզը զերծ պահել դենիկինյան ազդեցությունից և այն ամբողջապես անջատել Ռուսաստանից։*

*1919 թ. հունվարի վերջերին Կարսի չարչրկված խնդրում նկատվում է բեկում հօգուտ Հայաստանի։ Նախ՝ անգլիական զինվորական նահանգապետ գնդապետ Կ. Թեմպերլեյը համոզվում է, որ շտապել է՝ Կարսը թուրքերին հանձնելով։ Նրան հայտնի է դառնում, որ Մեծ Բրիտանիայի «վստահելի» մահմեդականները՝ թուրքական 12-րդ բանակի հրամանատարությունը և «Շուրան», համագործակցելով Ռուսաստանի կամավորական բանակի հետ, ձգտում են մարզում ռուսական իշխանություն հաստատել, մի հանգամանք, որն իրապես հակասում էր Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի քաղաքականությանը։ Այնուհետև՝ թուրքերն այլևս չէին ենթարկվում բրիտանական զինվորական նահանգապետին, չէին կատարում նրա հրամանները։ Եվ անգլիացիները սկսեցին աստիճանաբար փոխել իրենց վերաբերմունքը «հավատարիմ» մահմեդականների նկատմամբ, դիմեցին կտրուկ միջոցների, ձերբակալեցին «Շուրայի» բոլոր անդամներին և ուղարկեցին Թիֆլիս։ Ապրիլի 23-ին հայկական զորքը մտավ Կարս։*

* * *

Միացյալ և անկախ Հայաստանի հռչակագրի ընդունման նախապատրաստմանը զուգահեռ կառավարությունը ջանքեր գործադրեց հայկական բանակում թուլացնելու ռուսական ազդեցությունը, մերժելու «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական գաղափարը, որը հակասում էր Հայաստանի Հանրապետության անկախությանը:

1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի խորհրդի նիստում Ա. Խատիսյանը հայտարարեց, որ կառավարության որոշման համաձայն՝ Ռուսաստանի կամավորական բանակի հետ առնչություն ունեցող կամ նրանց գաղափարախոսությունը կրող սպաները, զինվորները և պաշտոնյաները ազատ են Ռուսաստանի հարավ մեկնելու, իսկ մնացողները պարտավոր են ճանաչել միմիայն Հայաստանի իշխանությունը[304]: Մ. Զինկևիչը 1919 թ. օգոստոսի 17-ին Ռուսաստանի կամավորական բանակի գլխավոր շտաբի պետին ուղղած զեկուցում հաղորդում է, որ Հանրապետության տարբեր բնագավառների բարձր պաշտոններում որոշված է չնշանակել ռուսների. «...Ինձ հանդիմանեցին, որ գլխավոր շտաբում ես շատ ռուսներ եմ հավաքագրել և ընդհանրապես հրամանատարական պաշտոններում ընտրել եմ իմ կողմնակիցներին»[305]: Գնդապետը դժգոհում է նաև, որ Երևանում սկսել են գրագրությունը վարել հայերեն: Հայաստան եկող ռուսներին դժկամությամբ են դիմավորում և նրանց համարում են Ռուսաստանի կամավորական բանակի գործակալներ:

1919 թ. մարտ–հուլիսին Ռուսաստանի կամավորական բանակի հետ Հայաստանի կառավարության պաշտոնական շփումները գրեթե սառեցվեցին: Դա պայմանավորված էր Համաձայնության պետությունների (ի դեմս Մեծ Բրիտանիայի) և նրա դաշնակից՝ Ռուսաստանի կամավորական բանակի միջև առկա անհամաձայնություններով ու նրանց վարած հակամարտ քաղաքականությամբ: Մեծ Բրիտանիան ձգտում էր Ռուսաստանին դուրս մղել Անդրկովկասից և չէր հանդուրժում Հայաստանի բարեկամական կապերը ռուսների հետ: Հետևաբար, բարդ ու անգամ անելանելի վիճակում հայտնված Հայաստանի կառավարությունից պահանջվում էր աչալուրջ հետևել դեպքերի ընթացքին և դրսևորել քաղաքական ճկունություն: «Հատուկ խորհրդակցության» հետ պաշտոնական հարաբերությունների սառեցումը պայմանավորված էր նաև մեկ այլ կարևոր հանգամանքով: Ռուսաստանի հարավը շարունակում էր Հայաստանի Հանրապետությանը դիտել իբրև ռուսական նահանգ և գործադրում էր բոլոր ջանքերը՝ իրականացնելու «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագիրը և վերականգնելու ռուսական նախկին կայսրությունը 1914 թ. սահմաններով: Ռուսաստանի հարավը թեև ցնցվում էր քաղաքական վայրիվերումներից, բայց չէր հրաժարվում Անդրկովկասից: Կար մի հանգամանք ևս՝ Փարիզի վեհաժողովը, որի հետ հայերը կապում էին Միացյալ Հայաստան ստեղծելու հույսերը: Այդ առումով տեղին ու ժամանակին էր միացյալ և անկախ Հայաստանի հռչակագիրը, որը մեծ անհանգստություն և դժգոհություն առաջ բերեց ռուսական քաղաքական շրջաններում:

Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի անկախության գործընթացին, հռչակագրի հրապարակմանը դրականորեն արձագանքեց Մեծ Բրիտանիան:

1919 թ. մարտի 28-ին Հայաստանի կառավարության խորհրդակցությանը մասնակցող գեներալ Թոմսոնը Համաձայնության երկրների և Ռուսաստանի կամավորական բանակի փոխհարաբերությունների կապակցությամբ հայտնում է, որ Ռուսաստանի հարավին օգնում են, քանի որ նրան օգտագործում են բոլշևիզմի դեմ մղվող պայքարում, սակայն ռուսներին երբեք թույլ չեն տա, որ խանգարեն Անդրկովկասի հանրապետու-

[304] Տե՛ս ՅԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88, ֆ. 201, ց. 1, գ. 43, թ. 38:

[305] Տե՛ս ГАРФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 78:



թյունների անկախությանը[306]: Չնայած դրան՝ Մեծ Բրիտանիան չէր ճանաչում Անդրկովկասի հանրապետությունների անկախությունը՝ չցանկանալով խախտել դաշնակցային «հավատարմությունը» Ա. Դենիկինի նկատմամբ:

Այդ ընթացքում փոխվում էր բոլշևիկների նկատմամբ Համաձայնության երկրների վերաբերմունքը, ինչը դրսևորվեց Փարիզի վեհաժողովում: 1919 թ. ապրիլի 24-ին Ա. Ահարոնյանը Փարիզից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին ուղղված նամակ-զեկուցում գրում է. «...Այստեղ այս օրերս ռուսական պրոբլեման մի լուրջ կրիզ ունեցավ. քիչ էր մնում, որ պետութիւնները ճանաչէին բոլշևիկներին ու հարաբերութեան մէջ մտնէին»[307]:

Այդ տեղեկությունը Հայաստանի կառավարությանը խիստ մտահոգեց: Թվում էր, թե նոր քաղաքական իրադրություն էր ստեղծվում Ռուսաստանի հարավի հետ ունեցած հարաբերություններում, որը Հայաստանի կառավարությունից պահանջում է նոր վարքագիծ որդեգրել: 1919 թ. ապրիլին Հայաստանի խորհուրդը, ելնելով ստեղծված քաղաքական իրավիճակից, որոշեց պահպանել չեզոքությունը՝ չմիջամտել բոլշևիկների և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների միջև պայքարին[308]:

1919 թ. ապրիլին Ա. Դենիկինն անգլիական զինվորական առաքելությանը հասկացնել տվեց, որ Հյուսիսային Կովկասում բոլշևիզմի տապալման, դրա տարածումը կանխելու և բոլշևիկյան Ռուսաստանին Բաքվի վառելանյութից զրկելու համար իրեն անհրաժեշտ է հաստատվել Անդրկովկասի սահմանների երկայնքով: Անգլիական զինվորական առաքելությունը համաձայնեց, որ Ռուսաստանի կամավորական բանակը բոլշևիկների դեմ պայքարելու համար մտնի Դաղստան՝ միաժամանակ Ա. Դենիկինին հավաստիացնելով, թե կջանա, որ կովկասցիները չեզոք դիրք ընդունեն նրա նկատմամբ: Անգլիական զինվորական առաքելությունը Ա. Դենիկինին նաև զգուշացրեց, որ իրենց պահանջները չկատարելու դեպքում Մեծ Բրիտանիայի կառավարությունը հարկադրված կլինի ոչ միայն հրաժարվել նրան աջակցելու քաղաքականությունից, այլև ընդհանրապես կդադարեցնի անհրաժեշտ մատակարարումները: 1919 թ. մայիսի կեսին Ա. Դենիկինը գրավեց Լեռնականների Հանրապետությունը, ամբողջ Դաղստանը՝ Պետրովսկն ու Դերբենդը: Առաջ եկավ միացյալ ուժերով նրա դեմ պայքարելու խնդիրը: Այն քննարկվեց Անդրկովկասի հանրապետությունների՝ Թիֆլիսում հրավիրված համաժողովում, որին մասնակցում էր նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի գլխավորությամբ: Հունիսի 9-ի վերջին նիստում Վրաստանի պատվիրակությունն առաջարկեց քննարկել և ընդունել բանաձև Ա. Դենիկինի դեմ ռազմական դաշինք ստեղծելու մասին: Ադրբեջանական կողմը պաշտպանեց այդ առաջարկը:

Հայաստանի պատվիրակությունը համաժողովին հայտնեց իր միասնական դիրքորոշումը զինակցությունը հանձն չառնելու մասին: Հունիսի 16-ին ստորագրվեց վրաց-ադրբեջանական «պաշտպանական» դաշինք: Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց չմիանալու վրաց-ադրբեջանական հակադենիկինյան դաշինքին՝ պայմանավորված մի քանի հանգամանքով. 1) Ռուսաստանի կամավորական բանակի համար օրակարգի խնդիր չէր Անդրկովկասի հանրապետություններին ռազմական ուժով տիրելը, որովհետև պատրաստվում էր Մոսկվայի վրա վճռական հարձակման: 2) Եթե անգամ Ա. Դենիկինը մտադրություն ունենար զենքի ուժ գործադրելու Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ, միևնույնն է, անգլիական զինվորական առաքելությունը դա թույլ չէր տա: 3) Ռուսաստանի կամավորական բանակը Ադրբեջանի և Վրաստանի

[306] Տե՛ս ՅԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 42, թ. 16:

[307] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 193 (մաս II), թ. 430:

[308] Տե՛ս նույն տեղում, գ. 120, թ. 117:

նկատմամբ ուներ իր հստակ ռազմավարությունը՝ ելնելով հետևյալից. ա) Թերեք–Դաղստանյան սահմաններին մոտենալով՝ ձգտում էր փակել բոլշևիկների ճանապարհը, նրանց թույլ չտալ օգտվել Բաքվի նավթից ու մատակարարումներից, այն տրամադրել Ռուսաստանի հարավին, մի հանգամանք, որն ընդունելի էր Անգլիայի զինվորական առաքելության համար, քանի որ ընդլայնում էր բոլշևիկների դեմ պայքարի հնարավորությունները, բ) սպառնալիք ստեղծելով Վրաստանի նկատմամբ՝ փորձում էր թուլացնել ու սահմանափակել նրա ռազմատենչ տրամադրությունները և հարկադրել, որ սևծովյան շրջաններից հանվեն վրացական զինված ուժերը: 4) Վրաստանին ու Ադրբեջանին վտանգ էր սպառնում հյուսիսից, իսկ Հայաստանին՝ հարավից՝ Թուրքիայից: 5) Հայաստանի Հանրապետության նկատմամբ Ա. Դենիկինը որևէ քայլ կամ առաջարկ չի արել, չնայած փետրվար–մարտ ամիսներից մինչև հուլիս Հայաստանի կառավարության և Ռուսաստանի կամավորական բանակի գլխավոր հրամանատարության միջև պաշտոնական շփումները սառել էին: 6) Հայաստանի կառավարությունը չէր կարող անուշադրության մատնել Ռուսաստանի հարավում կուտակված տասնյակ հազարավոր հայ գաղթականների կենսական շահերը, նաև ներգաղթի անհրաժեշտությունը: Շրջափակման պայմաններում Հայաստանի կառավարությունն ակնկալում էր Ռուսաստանի հարավից ներկրել հաց, զենք, զինամթերք և կենսականորեն անհրաժեշտ այլ նյութեր ու ապրանքներ: Հայաստանի կառավարությունը չէր կարող հրաժարվել Ռուսաստանի հարավի տնտեսական, քաղաքական ու ռազմավարական հովանուց: 7) Ա. Դենիկինից սպառնացող վտանգը զսպում էր Վրաստանի ու Ադրբեջանի զավթողական ձգտումները հայկական տարածքների նկատմամբ, մանավանդ որ նրանք հրաժարվում էին երաշխիքներ տալ, որ ձեռնպահ կմնան դրանից:

1919 թ. հունիսի 30–ին Հայաստանի կառավարությունն ընդունեց որոշում նաև Սիբիրի կառավարությանը կից Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու մասին՝ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելով Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության նախկին ներկայացուցիչ Գ. Ջամոյանին: Սեպտեմբերի 24–ին Գ. Ջամոյանին ջերմորեն ընդունեց ծովակալ Ա. Կոլչակը: Վերջինս խնդրեց Հայաստանի կառավարությանը հաղորդել հայության նկատմամբ իր ջերմ վերաբերմունքի մասին և ավելացրեց, որ իր իշխանությունը ցանկալի է համարում կապեր հաստատել Հայաստանի հետ: Ծովակալը խոստացավ նաև աջակցել Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայ բնակչության և գաղթականության իրավունքների պաշտպանության հարցում և լուծում տալ նրանց հուզող խնդիրներին:

Ուկրաինայում դիվանագիտական աշխատանքի փորձ ձեռք բերած Գ. Ջամոյանը եռանդով սկսեց իր առաքելությունը Սիբիրում և Հեռավոր Արևելքում: Սակայն այդ առաքելությունը երկար չտևեց: Սիբիրի իշխանությունն աստիճանաբար կորցնում էր իր ազդեցությունը տարածաշրջանում: 1919 թ. դեկտեմբերին Ա. Կոլչակի բանակը վերջնականապես պարտություն կրեց:

Սակայն Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելությունն անմիջապես հարաբերությունների մեջ մտավ և իր գործունեությունը շարունակեց Սիբիրի և Հեռավոր Արևելքի խորհրդային նորաստեղծ չորս երկրամասերի կառավարությունների հետ (Օմսկ–Իրկուտսկ, Վերին Ուդինսկ, Չիտա, Վլադիվոստոկ): Գ. Ջամոյանը լայն գործունեություն ծավալեց հայ համայնքի կազմակերպման, նրա աշխուժացման ուղղությամբ: Սիբիրի և Հեռավոր Արևելքի լայնածավալ տարածքներում ապրում էին մոտ 6 հազար հայեր, որոնք պատմական հանգամանքների բերումով վաղ ժամանակներից հարկադրված թողել էին իրենց հայրենիքը և հաստատվել հիմնականում խոշոր քաղաքներում ու բնակավայրերում:



Չունենալով Հայաստանի կառավարության հրահանգը՝ Գ. Ջամոյանը 1920 թ. սկզբներին օտարերկրյա այլ դիվանագիտական առաքելությունների հետ հեռանում է Իրկուտսկից: Օգոստոսի 3–ին Թիֆլիսից Հայաստանի Հանրապետության վարչապետ և արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանին ուղղված նամակ–զեկույցում նա տեղեկացնում է, որ կատարելով Հայաստանի կառավարության հանձնարարությունը՝ վերադառնում է Չինաստանով, Ճապոնիայով, Ինդոնեզիայով, ծովերով ու Հնդկական օվկիանոսով[309]: Նա ներկայացնում է նաև վերադարձի ճանապարհի հանդիպումները տարբեր երկրների հայ համայնքների ներկայացուցիչների հետ, որոնք ցանկություն էին հայտնել կապեր հաստատելու և օգնելու մայր հայրենիքին:

1919 թ. կեսերին լուրջ սպառնալիքներ են ստեղծվում Հայաստանի անվտանգության համար, ինչը պայմանավորված էր Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ու Ադրբեջանի նոր հարձակողական ձգտումներով, ինչպես նաև հարևան Վրաստանի թուրքամետ դիրքորոշումով:

Փաստորեն, թշնամին Հայաստանը շրջափակել էր «երկաթե օղակով»՝ մեծ սպառնալիք ստեղծելով մայրաքաղաք Երևանի համար: Իսկ Հայաստանի վերահսկողությունն իրականացնող անգլիական զինվորական առաքելությունն օգոստոսի 15–ին հեռանալու էր Անդրկովկասից, որի ներկայությունը մասամբ զսպում էր թուրք–թաթարական զավթիչներին: Որևէ արդյունք չտվեցին Փարիզի վեհաժողովին Հայաստանի կառավարության դիմումը և հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի ջանքերը՝ կասեցնելու անգլիական զորքերի դուրսբերումն Անդրկովկասից: Դրա փոխարեն Հայաստան ուղարկվեց ամերիկյան գնդապետ Ու. Հասկելը՝ որպես Հայաստանի գերագույն հանձնակատար: Հայաստանի կառավարության հետ Ռուսաստանի հարավի պաշտոնական շփումների վերականգնման խնդրում որոշակի դեր ունեցավ այն խոր հիասթափությունը, որ առաջացավ հանրապետության քաղաքական լայն շրջաններում ամերիկյան քաղաքականության նկատմամբ: Հայաստանի իշխանությունները համոզվեցին, որ Ու. Հասկելին ուղարկել են լայն իրավասություններով, սակայն առանց որևէ ուժի, որը կարողանար կանգնեցնել ադրբեջանցիների և թուրքերի ռազմական գործողությունները:

Հայաստանն աջակցություն էր փնտրում դրսում՝ ձգտելով գործադրել դիվանագիտական ջանքերը՝ վերականգնելու հարաբերությունները Ռուսաստանի հարավի հետ:

Ռուսաստանի կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» Անդրկովկասի տնտեսական լծակներին, ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտներին տիրելու նպատակով հուլիսի 2–ի գաղտնի հրահանգով առաջնահերթ խնդիր համարեցին Անդրկովկասի հանրապետությունների հետ առևտրատնտեսական, ֆինանսական համագործակցություն հաստատելը, ինչը նշանակում էր քաղաքական կախվածության մեջ գցել Անդրկովկասի հանրապետություններին: Անդրկովկասում, ի դեմս Հայաստանի, հենարան ստեղծելու նպատակով «Հատուկ խորհրդակցությունը» ձգտում էր վերականգնելու պաշտոնական հարաբերությունները Հայաստանի հետ՝ օգտագործելով և շահարկելով նրա ներքին ու արտաքին ծանր կացությունը: Ըստ էության, թե՛ Հայաստանի կառավարությունը և թե՛ Ռուսաստանի կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը երկուստեք ձգտում էին վերականգնելու պաշտոնական շփումները՝ յուրաքանչյուրը ելնելով քաղաքական իր նկատառումներից:

Հայաստանի խորհրդարանի պատգամավորները, հիասթափվելով Փարիզի վեհաժողովից և Համաձայնության երկրներից, առաջարկեցին վերականգնել պաշտոնական հա-

309 Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 610, թ. 8–10:

բաբերությունները Ռուսաստանի Հարավի հետ և փոխել Հայաստանի իշխանությունների քաղաքական կողմնորոշումը:

Ռուսաստանի կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը ուշիուշով հետևում էր Հայաստանում ընթացող իրադարձություններին: 1919 թ. օգոստոսի 17-ին այդ բանակի շտաբի պետին ուղղած գաղտնի նամակ-զեկուցում գնդապետ Մ. Զինկևիչը տեղեկացնում է, որ մահմեդականները շրջափակել են Հայաստանը համատարած օղակով: Հայկական բանակը երկար դիմադրել չի կարող, քանի որ չունի անհրաժեշտ քանակությամբ զենք, իսկ պահեստներում գրեթե բացակայում է փամփուշտը: Ըստ Մ. Զինկևիչի՝ Հայաստանի խորհրդարանը և կառավարությունը գիտակցում են, որ այդ ծանր իրավիճակում Հայաստանին կարող է սատարել Ռուսաստանի Հարավը, ուստի նրանք շրջվում են դեպի Ռուսաստան, ինչը, սակայն, ընթանում է շատ դժվար ու դանդաղ: Գնդապետը գտնում է, որ Հայկական հարցը Ռուսաստանի համար ունենալու է կարևոր նշանակություն, ինչպես նախկինում էր, ուստի խորհուրդ է տալիս Հայերի հետ հաշվի նստել՝ որպես ամենալոյալ տարրի, և նրանց ցույց տալ բարոյական, իսկ ավելի լավ է՝ նյութական օգնություն: Այն է՝ տրամադրել մեկ միլիոն փամփուշտ, թույլատրել հաց գնել, վարկ տրամադրել և այլն, ինչը մեծ լծակ կլինի Ռուսաստանի կամավորական բանակի և «Հատուկ խորհրդակցության» ձեռքում՝ Հայաստանի իշխանությունների վրա ունենալու քաղաքական ազդեցություն[310]:

Գեներալ Ա. Դենիկինը նշում է, որ գնդապետ Մ. Զինկևիչի պահանջը ժամանակին կատարվեց, և օգոստոսի վերջին՝ ամենածանր պահին, մեծ դժվարություններով հաջողվեց Բաթումից ցամաքային ճանապարհով Արդահան, այնտեղից էլ Երևան ուղարկել երեք միլիոն փամփուշտ[311]:

1919 թ. օգոստոսին Հայաստանի կառավարության հանձնարարությամբ Եկատերինոդար մեկնեց հայկական բանակի գլխավոր շտաբի պետ գնդապետ Մ. Զինկևիչը՝ Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ հարաբերությունները կարգավորելու առաջադրանքով:

Նոր պայմաններում, օգտվելով Հայաստանում ստեղծված բարենպաստ իրավիճակից, ռուսական կողմը գնդապետին այս անգամ նշանակեց հանրապետության կառավարությանը կից իր պաշտոնական ներկայացուցիչը՝ նրան լիազորելով կառավարության հետ բանակցություններ վարել բոլոր հարցերով: Այդ հարաբերությունների վերականգնումը նոր թափ հաղորդեց հայ գաղթականության, Ռուսաստանի Հարավի զինված ուժերում ծառայող հայ զինվորների հայրենադարձությանը, հայկական բանակին զենքի, զինամթերքի մատակարարմանը, առևտրատնտեսական կապերի հաստատմանը: Ռուսաստանի Հարավի հետ պաշտոնական հարաբերությունները վերականգնելուց հետո Հայաստանի կառավարությունը դարձյալ պահպանեց խիստ զգուշավոր քաղաքականությունը:

Հայաստանի և Ռուսաստանի Հարավի միջև նոր էին վերականգնվել պաշտոնական հարաբերությունները, երբ աշնանն է՛լ ավելի ծանրացավ հանրապետության ռազմաքաղաքական դրությունը: Ադրբեջանը նախապատրաստվում էր դիմագրավելու Ա. Դենիկինին ու միաժամանակ ռազմական գործողություններ սկսելու Հայաստանի դեմ: Նոյեմբերի 1-ին ադրբեջանական զորքերը գեներալ Ալի աղա Շիխլինսկու հրամանատարությամբ երեք ուղղություններով (Շուշի, Ջեբրայիլ և Նախիջևան) ընդհանուր հարձակում գործեցին Զանգեզուրի վրա և նոյեմբերի 5-ին գրավեցին Խոզնավար և Բայանդուր գյուղերը: Զանգեզուրի վրա հարձակվելով՝ Ադրբեջանը նպատակադրվել էր գրավել Շա-

[310] Տե՛ս ГАРФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 79:

[311] Տե՛ս Деникин А., Очерки русской смуты, кн. 3, т. 4, т. 5, Вооруженные силы юга России, էջ 253:



րուր–Նախիջևանը և սահմանակից դառնալ Թուրքիային: Դրանով նա լայն հնարավորություն էր ստանում Թուրքիայից անընդմեջ ազատ և անարգել ներկրելու անհրաժեշտ քանակությամբ զենք, զինամթերք և անգամ զորամասեր: Հայաստանին և Հարավից Ռուսաստանին սպառնացող վտանգը կանխելու նպատակով Ա. Դենիկինը նոյեմբերի 9-ին Տագանռոգում ստորագրեց հրաման. «Ռուսական բանակի նկատմամբ ադրբեջանական իշխանությունների թշնամական վերաբերմունքի և Հայաստանի տարածքների վրա ադրբեջանական զորքերի ուխտադրուժ հարձակման կապակցությամբ հրամայում եմ նրանց զորքերում ծառայող բոլոր ռուս սպաներին թողնել զինվորական շարքերը»[312]: Ա. Դենիկինի հրամանի դիվանագիտական քայլը նպատակաուղղված էր ինչ-որ ձևով կանխելու Ռուսաստանի Հարավին և Հայաստանին սպառնացող վտանգները: Հրամանի հրապարակումը, անշուշտ, ունեցավ նաև որոշակի հետևանքներ. նոր ուժով և լայնորեն շրջանառվեց Ռուսաստանի կամավորական բանակի և Հայաստանի միջև իբր գոյություն ունեցող ռազմական գաղտնի դաշինքի առասպելը: Շրջանառվեց նաև այն համոզմունքը, թե իբր Ռուսաստանի կամավորական բանակը և Հայաստանի Հանրապետությունը նախապատրաստվում են հարձակման Ադրբեջանի վրա: Փաստորեն այդ կեղծ լուրը Ա. Դենիկինի ձեռքում դարձավ զսպող գործոն՝ ի չիք դարձնելու Ադրբեջանի ու նրա դաշնակիցների ռազմատենչ մտադրությունները, և Ադրբեջանը չհամարձակվեց ռազմական գործողություններ սկսել Ռուսաստանի կամավորական բանակի դեմ: 1919 թ. նոյեմբերի 9-ի հրամանը զսպող դեր կատարեց նաև Հայաստանի հակառակորդների համար: Ադրբեջանի վարչապետ Ն. Ուսուբբեկովը հայտարարեց, թե Ադրբեջանն ամենից քիչ շահագրգռվածն է զենքի ուժով լուծելու սահմանային հարցերը Հայաստանի հետ, քանի որ մեծ վտանգ է սպառնում հյուսիսից[313]: Ըստ Ա. Խատիսյանի՝ Ա. Դենիկինի հրամանը հայտնի դառնալուց հետո ադրբեջանական հարձակումների սրությունը մեղմացավ[314]:

Դեկտեմբերի 9-ին Լ. Եվանգուլյանին ուղղած մեկ այլ նամակում Ա. Խատիսյանը գրում է, որ իրեն թվում է՝ այդ հրամանը Հայաստանի կիսաճանաչումն է Ռուսաստանի կամավորական բանակի կողմից: Նա նկատի ուներ, որ Անգլիան և Ամերիկան չեն ողջունում Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ, և կարծում է, որ նրանց այդ հրամանը դուր չի գա: Դրա համար է նորից դրվում երեք հանրապետությունների միջև համադաշնության հարցը, որը սուր ծայրով ուղղված է Ռուսաստանի դեմ[315]: Փաստորեն, ռուսական ազդեցության տարածման դեմ առաջադրվում էր Անդրկովկասի հանրապետությունների քաղաքական միավորման խնդիրը: Ստեղծված նոր իրադրությունը Հայաստանի ղեկավարությունից պահանջում էր ձեռնարկել զգույշ ու ողջամիտ քայլեր:

Ու. Հասկելը և Մ. Ուորդրոպը, կողմ լինելով անդրկովկասյան հանրապետությունների միության ստեղծմանը, գտնում էին, որ նրանք ռազմական դաշինք չպետք է կնքեն, այլ գլխավորապես ծանրանան տնտեսական, երկաթուղային, փոստ–հեռագրական և տարանցման պայմանագրերի վրա[316]: Հայաստանի կառավարությունը, ելնելով այդ ամենից, որոշում է, որ «...այժմ անհնար է կոնֆեդերացիա կնքել Վրաստանի և Ադրբեջանի հետ, քանի որ մեր սահմանները վերջնականապէս յայտնի չեն: Կոնֆեդերացիա կնքել այն պայմաններով, ինչ պայմաններ առաջարկւած են, կը նշանակէ նաև զինւորական դաշն կնքել ընդդէմ Ռուսաստանի, որ դորանով մենք թոյլ տւած կը լինենք Թուրքական զոր-

[312] Азербайджань (Баку), 6 декабря, 1919. Յառաջ, 10 դեկտեմբերի, 1919:

[313] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 78:

[314] Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 211, թ. 7:

[315] Տե՛ս նույն տեղում, թ. 9:

[316] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 5:

քերին անցնել մեր երկրով ընդդեմ Դենիկինի և այլն»[317]: Հայաստանի կառավարությունը հնարավոր էր համարում կոնֆեդերացիայի ստեղծումը, եթե արդարացի լուծվեին տարածքային հարցերն Ադրբեջանի ու Վրաստանի հետ, և եթե պայմանագրի մեջ մտցվեր այնպիսի կետ, որ դաշինքն ուղղված չէ Ռուսաստանի հարավի դեմ[318]: Գոյություն ուներ նաև մեկ այլ կարևոր հանգամանք. Հայաստանի կառավարությունը չէր կարող մտնել կոնֆեդերացիայի մեջ առանց Արևմտյան Հայաստանի հարցի լուծման:

1920 թ. հունվարին փոխվեց քաղաքական իրադրությունը: Ռուսաստանի կամավորական բանակը պարտություն կրեց բոլշևիկների դեմ մղվող արյունալի քաղաքացիական պատերազմում:

1920 թ. ապրիլին Թիֆլիսում հրավիրված անդրկովկասյան երեք հանրապետությունների վեհաժողովի օրակարգում դրված կոնֆեդերացիայի հարցի քննարկումը մնաց անավարտ Ադրբեջանի խորհրդայնացման պատճառով: Ապարդյուն անցան Ռուսաստանի կամավորական բանակի դեմ ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու և նրա մեջ Հայաստանի Հանրապետությանը ներքաշելու հարևանների փորձերը:

Խորհրդային բանակի ռազմական հաջողությունները փոխեցին քաղաքական իրադրությունը նաև Անդրկովկասում, որտեղ վճռականորեն մուտք էր գործում Խորհրդային Ռուսաստանը: Համաձայնության երկրների կառավարությունները երկյուղում էին, որ Անդրկովկասը ենթակա է բոլշևիկների ներխուժման վտանգին, որը կարող է ճանապարհ հարթել բոլշևիզմի լայն տարածմանը դեպի Իրան և Առաջավոր Ասիայի մյուս երկրներ: Ահա թե ինչու Անդրկովկասի հանրապետությունների ճանաչումը դարձավ հրատապ խնդիր Համաձայնության երկրների համար: 1920 թ. հունվարի 12–ին Անտանտի գերագույն խորհուրդը ճանաչեց Վրաստանի, Ադրբեջանի, իսկ հունվարի 19–ին՝ Հայաստանի կառավարությունները: Գերագույն խորհրդի հանձնարարությամբ 1920 թ. փետրվարի 3–ին գեներալ Ա. Դենիկինը նույնպես ճանաչեց Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ պետությունների փաստական գոյությունը[319]:

Այդ ճանաչումը կատարվեց այն ժամանակ, երբ Ռուսաստանի կամավորական բանակը փլուզման եզրին էր, սակայն գեներալ Ա. Դենիկինը չէր հրաժարվում «Միացյալ, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագրից:

Քաղաքական բարդ իրադրության պայմաններում մինչև Ա. Դենիկինի վերջնական պարտությունը հայ դիվանագիտությունը շարունակեց չեզոքություն պահպանել թե՛ Ռուսաստանի հարավի և թե՛ Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ՝ չխառնվելով նրանց պայքարին: Բոլոր դեպքերում, ելնելով հանրապետության շահերից, Հայաստանի կառավարությունը շարունակեց բարեկամական հարաբերություն պահպանել Ռուսաստանի կամավորական բանակի հետ մինչև նրա վերջնական պարտությունը:

* * *

Հայաստանի նորաստեղծ հանրապետության արտաքին քաղաքականության կարևոր նվաճումն էր Ուկրաինայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, ինչը ձեռք բերվեց որոշակի դժվարությունների հաղթահարման ճանապարհով: Ուկրաինական կողմը հենց սկզբից ողջունեց Հայաստանի Հանրապետության ծնունդը և պատրաստ էր նրա հետ հաստատելու բազմակողմանի կապեր:

Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու դժվարությունները մեծ մասամբ պատմական բարդ ժամանակաշրջանի,

[317] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 2005, թ. 3:
[318] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 6, ֆ. 276, ց. 1, գ. 116, թ. 129:
[319] Տե՛ս ГАРФ, ф. 446, оп. 2, д. 36, л. 95. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 14:



տեխնիկական ու կազմակերպչական թերությունների, կապի ու հաղորդակցման չափազանց թույլ լինելու ու երբեմն բացակայության հետևանք էին: Ուկրաինայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը նպաստելու էին հայ և ուկրաինական ժողովուրդների դարավոր կապերը: Պատմական հանգամանքների բերումով հայության մի հատվածը դեռ վաղուց ապաստան էր գտել Ուկրաինայում և վայելում էր ուկրաինական ժողովրդի բարյացակամ վերաբերմունքը: Մեծ եղեռնի հետևանքով հայության մի ստվար զանգված դարձյալ հանգրվանեց Ուկրաինայում: Այդտեղ ստեղծվեց հայկական մեծ համայնք, որն աստիճանաբար կազմակերպվեց ու դարձավ ազգային դեմք ունեցող հավաքական ուժ:

1918 թ. առաջին ամիսներին Ուկրաինայում ստեղծվեց հայկական կազմակերպությունների՝ հայոց ազգային խորհուրդների, միությունների ու զինվորական կոմիսարիատների մեծ ցանց, որը կարգավորում ու ղեկավարում էր հայ համայնքի կյանքը, լուծում նրա խնդիրները: Հայկական ազգային կազմակերպությունները միավորվում ու ստեղծում են ղեկավար կենտրոն՝ ի դեմս Հայկական կոմիսարիատի, որը կատարում էր Հայաստանի ազգային ներկայացուցչության դեր:

Հայկական ազգային մարմինները սերտ կապի մեջ էին Ուկրաինայի իշխանությունների հետ և ստանում էին նրանց հովանավորությունն ու աջակցությունը: Նրանք կապեր ունեին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հետ, որից ստանում էին ղեկավար ցուցումներ, փոխանակում տեղեկատվություն: Գործելով Ուկրաինայում ստեղծված խիստ անկայուն քաղաքական իրադրության և փոփոխվող իշխանությունների պայմաններում՝ հայկական ազգային կազմակերպությունները, հաղթահարելով մի շարք խոչընդոտներ, կարողանում էին կատարել իրենց առջև դրված խնդիրները: Ուշագրավ է նրանց ցուցաբերած գործնական մտահոգությունը մայր հայրենիքի անվտանգության ապահովման հարցում:

Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու գործում մեծ դեր է խաղացել նաև Կիևում Հայկական կոմիսարիատի կոլեգիան, որը հող էր նախապատրաստել դրա համար[320]:

Չնայած դրան՝ Ուկրաինայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը բավական ձգձգվեց: Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության առաջին դիվանագիտական ներկայացուցիչ դարձավ Գ. Ջամոյանը[321]:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության աշխատանքում որոշ դժվարություններ էր ստեղծում այն հանգամանքը, որ հայկական համայնքը կենտրոնացված չէր, ցրված էր մի շարք քաղաքներում ու ավաններում: Հայության բոլոր հատվածները մեկտեղելու, իրար կապելու, նրանց կարիքները ժամանակին հոգալու նպատակով հյուպատոսություններ ստեղծվեցին այն քաղաքներում, որտեղ կային հայության ստվար զանգվածներ: Դյուրին չէր այդ խնդրի իրագործումը, քանի որ դիվանագիտական կադրերի ու ֆինանսական միջոցների խիստ պակաս էր զգացվում: Չնայած դրան՝ Ուկրաինայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը հյուպատոսական հիմնարկներ բացեց Օդեսայում, Խարկովում և Կիևում:

Նկատի ունենալով, որ հայությունն առավել մեծ չափով բնակվում էր Օդեսայում, որը կարևոր նավահանգիստ էր ու ճանապարհների հանգույց, այդտեղ բացվեց գլխավոր հյուպատոսություն: Այն ընդհատումներով գործեց 1918 թ. հոկտեմբերի սկզբից մինչև 1919 թ. դեկտեմբերի վերջը: Այդ ժամանակահատվածում Ուկրաինայում իշխանությունների հաճախակի փոփոխությունը վնասում էր գլխավոր հյուպատոսության գործունեությանը, որը երբեմն ընդհատվում էր, ապա կրկին վերականգնվում: Անհրա-

[320] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73 (մաս I), թ. 46:
[321] Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 100:

*ծեչտ նյութական և ֆինանսական միջոցների պակասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ անկայուն ու թույլ կապը, ժամանակին ղեկավար ցուցումներ, հրահանգներ չստանալը նույնպես վնասում էին հյուպատոսական հիմնարկի արդյունավետ գործունեությանը: Այդուհանդերձ Օդեսայում Հայաստանի գլխավոր հյուպատոսությունը կարողացավ հաղթահարել ծագող դժվարությունները և կենսագործել իր առջև դրված խնդիրները՝ ստանալով տեղի հայ համայնքի, ազգային մարմինների և հատկապես Հայոց ազգային խորհրդի աջակցությունը: Հյուպատոսության գործունեությունը համակարգում էր Գ. Ջամոյանը: Գնահատանքի է արժանի Օդեսայում Հայաստանի առաջին հյուպատոս Մ. Պոպովի և նրան փոխարինած պաշտոնակատար Ե. Մելիքյանի հայրենանվեր ու ազգանվեր աշխատանքը:*

*Ի տարբերություն Օդեսայի գլխավոր հյուպատոսության բազմազան ու արդյունավետ գործունեության՝ Խարկովի հյուպատոսական հիմնարկը որոշակի պատճառներով չկարողացավ նույնպիսի աշխատանք ծավալել: Այնուհանդերձ վերջինս մեծ ջանքեր գործադրեց գաղթականության ու քաղաքում գործող ազգային կազմակերպությունների միավորման, հայ բնակչության, մասնավորապես գաղթականների իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Այդ գործում աչքի ընկան հյուպատոսներ Մ. Մելիքյանն ու Ռ. Յուզբաշյանը:*

*1918 թ. նոյեմբերին Գ. Ջամոյանի հրամանով հյուպատոսություն բացվեց նաև Կիևում: Դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական, նախկին հայկական կոմիսարիատի կոլեգիայի նախագահ գնդապետ Մ. Լոռիզեն միաժամանակ ստանձնեց Կիևում Հայաստանի հյուպատոսի պարտականությունը, իսկ քարտուղար դարձավ Օ. Խազիզյանը:*

*Այսպիսով Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների և Ուկրաինայի հետ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կապերի հաստատումն ու տարատեսակ հարաբերությունների իրականացումն անշուշտ ունեցան դրական նշանակություն Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական անվտանգության և առևտրատնտեսական ու հումանիտար օժանդակության տեսակետից:*

**Աղբյուրը՝** *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, h. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 129-142: